ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԿԵՂԵՑՈՒ

ՍԱՆՐԱՍԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սախագահ Ջ. Ռուբեն Քլարկ կրտ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԿԵՂԵՑՈՒ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ԾՐԱԳԻՐԸ

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ կրտ.

Ուղղվել է Յուտայի Բրիգամ Յանգի Համալսարանի Ասպեն Գրուվի ամառային դպրոցի կրոնական սեմինարիայի և ինստիտուտի ղեկավարներին 1938թ. օգոստոսի 8-ին:

Պատրաստվել է Եկեղեցու Կրթական
Համակարգի կողմից

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի
Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Վերանայված տարբերակ

© 1992, 1994 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Վերանայված է 2004թ.
Printed in Germany

Անգլերենիհաստատումը՝ 8/04
Թարգմանության հաստատումը՝ 8/04

The Charted Course of the
Church in Education-ի թարգմանությունը
Armenian

Հարգելի կոլեգաներ

Ի քանի բաներ կան, որոնք արժանի են կրկնակի ընթերցման, քանի որ հազվադեպ են հանդիպում մնայուն որակով այն նյութերը, որոնք բազմաթիվ անգամ կարդացվել են և շարունակում են ոգեշնչել երկրորդ կամ երրորդ սերնդին: Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկի «Կրթության վերաբերյալ եկեղեցու մանրամասն ծրագիրը» պատկանում է այդպիսի մի խմբի և հրատարակվել է, որպեսզի նրա հիմնական սկզբունքները շարունակեն ոգեշնչել և քաջալերել եկեղեցու կրթական համակարգի աշխատողներին:

Եկեղեցու և նրա առաքելության հանդեպ ունեցած ուսուցիչների պարտականությունների և ուսանողների հոգևոր կարիքների վերաբերյալ նախագահ Քլարկի ամփոփումը շատ տեղին է, համապարփակ և ոգեշնչող:

Թող վերատպվող այս նյութը ծառայի մեզ հիշեցնելով, որ թեև դրանք կիրառելու համար յուրահատուկ բարոյականություն և հոգևոր քաջություն է հարկավոր, նախագահ Քլարկի ուսուցանած ուսմունքները մնում են ամուր ու հաստատուն: Թերևս ժամանակն է բոլոր ուսուցանողների համար վերստուգելու իրենց ընթացքը և տեսնելու, թե որտեղ են իրենք և արդյոք «…մանրամասն ծրագրում» լուսաբանված պարզ սկզբունքներն ու առարկաները լիովին կիրառվում են (կամ օգտագործվում):

Լավագույն բարեմաղթանքներով,
Վարչական գրասենյակ

Դպրոցական հասակում ես հիացած էի այն մեծ վիճաբանությամբ, որը տեղի էր ունենում երկու հզոր քաղաքական գործիչների՝ Վեբսթերի և Հեյնի միջև: Նրանց հռետորության գեղեցկությունը, Վեբսթերի հայրենասիրության իդեալիստական արտահայտության ազնվահոգի զգացումը, Միացյալ Նահանգներում քաղաքացիական պատերազմի կանխատեսումը, երբ ազատությունը կհաղթեր ստրկությանը, այդ ամենը ինձ խորապես հուզել էր: Վիճաբանությունը սկսվեց հանրային հողերի վերաբերյալ Ֆուտի որոշումից հետո: Այն զարգացում ունեցավ և առիթ հանդիսացավ սահմանադրական հիմնական խնդիրների դիտարկման համար: Ես երբեք չեմ մոռանա Վեբսթերի պատասխանի առաջին պարբերությունը, որով նա ընթացքից շատ հեռու շեղված վիճաբանությունը հետ բերեց իր սկզբնական տեղը: Այդ պարբերությունը հետևյալն էր.

Պրն նախագահ. Երբ փոթորկալից մի քանի օրերի ընթացքում նավաստիի նավը ցնցվում է ջրի վրա մի ծովում, որի մասին քիչ բան գիտի նավաստին, նա բնազդաբար օգտագործում է փոթորկի առաջին իսկ դադարը տեսանելի արևի ժամանակ, որոշելու համար, թե որ զուգահեռականի վրա է ինքը և որքան է փոթորիկը շեղել նրան ճիշտ ուղղությունից: Եկեք հետևենք այս նավաստիի իմաստուն օրինակին և մինչ այս վիճաբանության ալիքների վրա հեռու նավարկելը վերադառնանք այն կետին, որտեղից սկսել ենք, որպեսզի գոնե ի վիճակի լինենք որոշել, թե այժմ որտեղ ենք գտնվում: Ես խնդրում եմ, որ որոշումը կարդացվի:

Այժմ շտապում եմ հուսալ, որ դուք չեք մտածի, թե ես կարծում եմ, որ սա Վեբսթեր-Հեյն վիճաբանությունն է, կամ էլ, որ ես ինձ Դանիել Վեբսթեր եմ պատկերացնում: Եթե այսպիսի բաներ մտածեիք, ապա դուք չարաչար կսխալվեիք: Ես ընդունում եմ, որ մեծահասակ եմ, բայց ոչ այդքան մեծ, որքան Վեբսթերը: Վեբսթերը այնքան նրբազգաց է օգտագործում իրադրությունների կապը, երբ հեռու ծովերի կամ անապատների մասին մտածելուց հետո, ջանք է արվում հետ դառնալու այն կետին, որտեղից սկսել ենք, այնպես որ իմ կարծիքով դուք կներեք ինձ, եթե ես էլ օգտագործեմ նույն սկզբունքը եկեղեցու դպրոցական կրթության հիմքում ընկած էական հիմունքներից կարևորագույն մի քանիսը ներկայացնելու համար:

Իմ կարծիքով, այդ հիմունքները հետևյալն են.

Եկեղեցին Աստծո կազմակերպված քահանայությունն է: Քահանայությունը կարող է գոյատևել առանց եկեղեցու, սակայն եկեղեցին չի կարող գոյություն ունենալ առանց քահանայության: Եկեղեցու առաքելությունն է՝ թե աշխարհիկ, և թե հոգևոր առումով կատարյալ կյանքով ապրելու ձգտման մեջ անհատ անդամին ուսուցանելը, քաջալերելը, աջակցելը և պաշտպանելը, ինչպես ասված է ավետարանում Վարդապետի կողմից. «Արդ, դուք կատարյալ եղիք, ինչպես ձեր Հայրը որ երկնքումն է, կատարյալ է» (Մատթէոս Ե.48): Երկրորդ, աշխարհիկ և հոգևոր առումով Եկեղեցին պետք է պահպանի, ուսուցանի, քաջալերի և պաշտպանի անդամներին որպես ըստ ավետարանի ապրող մի խումբ: Երրորդ, Եկեղեցին ակտիվորեն պետք է

քարոզի ճշմարտությունը, կանչելով բոլոր մարդկանց ապաշխարելու, ապրելու ըստ ավետարանի, քանի որ ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու խոստովանի (Մոսիա 27.31):

Այս ամենից զատ, Եկեղեցու և նրա յուրաքանչյուր և բոլոր անդամների համար կան երկու կարևոր բան, որոնք չպետք է անտեսվեն, մոռացվեն աղավաղվեն կամ մերժվեն:

Առաջինը, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, Հոր միածինը մարմնում, աշխարհի Արարիչը, Աստծո գառը, աշխարհի մեղքերի Ջոհը, Ադամի մեղսագործության Քավիչը, որ Նա խաչվեց, որ Նրա հոգին լքեց մարմինը, որ Նա մահացավ, որ Նա թաղվեց գերեզմանում, որ երրորդ օրը Նրա հոգին միացավ մարմնի հետ, որը նորից դարձավ կենդանի, որ Նա դուրս ելավ գերեզմանից որպես հարություն առած մարդ, կատարյալ մարդ, հարության առաջին պտուղը, որ հետո Նա բարձրացավ Հոր մոտ և Նրա մահի, ինչպես նաև հարության միջոցով և շնորհիվ այս աշխարհում ծնվող յուրաքանչյուր մարդ հենց սկզբից կլինի նույնպես բառացիորեն հարություն առած: Այս վարդապետությունը աշխարհի պես հին է: Հոբն ասել է.

> *Եվ իմ մորթը այսպես թափվելուց հետո, այն ժամանակ իմ մարմնիցը տեսնելու եմ Աստծուն: Որին որ ես ինքս եմ տեսնելու, և իմ աչքերն են մտիկ տալու նրան, և ոչ թե ուրիշը* (Հոբ ԺԸ. 26–27):

Հարություն առած մարմինը մսից, ոսկորներից և հոգուց կազմված մարմին է, և Հոբն արտաբերում էր մի մեծ ու անմար ճշմարտություն: Այս դրական փաստերին և այստեղ անպայմանորեն նշված բոլոր մյուս փաստերին Եկեղեցու յուրաքանչյուր անդամը պետք է անկեղծորեն ամբողջ հավատքով հավատա:

Երկրորդ բանը, ինչին մենք պետք է ամբողջ հավատքով հավատանք այն է, որ Հայրը և Որդին իրականում իրոք և հաստատ հայտնվել են մարգարե Ջոզեֆին տեսիլքով անտառում, որ դրանից հետո Ջոզեֆը և մյուսները տեսել են նաև այլ երկնային տեսիլքներ, Աստծո Որդու կողմից կարգված Ավետարանը և սուրբ քահանայությունը ճշմարիտ և փաստացի վերականգնվել են երկրի վրա, որտեղից կորած էին նախնական եկեղեցու ուխտադրժության պատճառով, որ Տերը նորից է կազմակերպել Իր եկեղեցին Ջոզեֆ Սմիթի կամքով, որ Մորմոնի Գիրքը հենց այն է, ինչ մարգարեացել էր լինելու, որ մարգարեն անթիվ հայտնություններ է ստացել առաջնորդության, ամրացման, կազմակերպության և եկեղեցին ու նրա անդամներին քաջալերման մասին, որ մարգարեին հաջորդողները նույնպես կանչված են Աստծո կողմից և հայտնություններ են ստանում եկեղեցու կարիքներին համաձայն, և նրանք կշարունակեն հայտնություններ ստանալ, երբ եկեղեցին ու նրա անդամները, ապրելով իրենց ունեցած ճշմարտությամբ, կձգտեն ավելին ունենալ, քանի որ սա իսկապես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է, և նրա հիմքում ընկած համոզմունքները օրենքներ և սկզբունքներ են, գրված Հավատո Հանգանակում: Այս փաստերը և նրանցից յուրաքանչյուրը

բոլոր այն բաների հետ միասին, որոնք անպայմանորեն նշված են այստեղ, կամ բխում են դրանցից, պետք է մնան անփոփոխ, չձևափոխված, առանց աղավաղման, առանց ներման-բեկման կամ շրջանցման, դրանք չպետք է սխալ բացատրվեն կամ թաքցվեն: Առանց այս երկու խոշոր համոզմունքների եկեղեցին կդադարի լինել եկեղեցի:

Ցանկացած անհատ, ով չի ընդունում Նազարեթցի Հիսուսի կամ ավետարանի և սուրբ քահանայության վերականգնման վերաբերյալ այս վարդապետությունների ամբողջությունը, Վերջին Օրերի Սուրբ չէ: Հարյուր հազարավոր հավատարիմ, աստվածավախ տղամարդիկ և կանայք, ովքեր կազմում են եկեղեցու անդամության հզոր մարմինը, ամբողջովին ու լիարժեք հավատում են այս բաներին, և նրանք աջակցում են եկեղեցուն ու նրա հաստատություններին այս հավատի պատճառով:

Ես շեշտում եմ այս բաները, քանի որ դրանք են եկեղեցու դիրքի ու տեղի զուգահեռականն ու միջօրեականը, թե այս աշխարհում, և թե հավերժության մեջ: Իմանալով մեր ճիշտ ուղղությունը մենք կկարողանանք փոխել այն, եթե դրա կարիքը լինի, կկարողանանք նորից բռնել ճշմարիտ ուղղությունը: Եվ ապա կարող ենք իմաստությամբ վերհիշել Պողոսի խոսքերը.

> *Բայց եթե մենք էլ, կամ երկնքիցը մի հրեշտակ ավետարանէ ձեզ նորանից ուրիշ քանի թե որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի* (Գաղատացիս Ա.8):

Ինչ վերաբերում է Վեբսթեր-Հեյն օրինակին, ապա ես այժմ ավարտել եմ որոշման բնօրինակի ընթերցանությունը:

Ինչպես արդեն ասացի, ես ասելիք ունեմ եկեղեցու երիտասարդության կրոնական կրթության վերաբերյալ: Պետք է ի մի բերեմ ասելիքս երկու հիմնական վերնագրերի ներքո՝ ուսանող և ուսուցիչ: Կխոսեմ անկեղծորեն, քանի որ մենք արդեն այնտեղ չենք, որտեղ կարող էինք խելացի հայացքով արտահայտել երկիմաստ բառեր կամ քողարկված արտահայտություններ: Մենք պետք է պարզ ասենք այն, ինչ նկատի ունենք, քանի որ դրանից է կախված և մեր երիտասարդության, և ամբողջ եկեղեցու ապագան ինչպես այստեղ երկրի վրա, այնպես էլ դրանից հետո:

Եկեղեցու երիտասարդության, ձեր ուսանողների հիմնական մեծամասնությունը ամուր են մտքով և հոգով: Խնդիրը, հիմնականում, նրանց ամուր պահելու, ոչ թե՝ փոխելու մեջ է:

Եկեղեցու երիտասարդությունը քաղցած է Հոգու բաների համար, նրանք շատ են ցանկանում սովորել ավետարանը և ուզում են ստանալ այն անմիջապես ու ճշգրիտ, պարզ տեսքով: Նրանք ցանկանում են իմանալ այն սկզբունքների մասին, որոնք հենց նոր բացատրեցի, մեր համոզմունքների մասին, նրանք ցանկանում են վկայություններ ձեռք բերել այդ սկզբունքների ճշմարտացիության վերաբերյալ: Նրանք այժմ ոչ թե

կասկածողներ են, այլ պրպտողներ, ճշմարտությունը որոնողներ: Կասկածը չպետք է սերմանվի նրանց սրտերում: Մեծ է բեռը և դատավճիռը այն ուսուցչի, ով կասկած է ցանում հավատացող հոգու մեջ:

Այս ուսանողները փափագում են ունենալ իրենց հայրերի ու մայրերի հավատը, նրանք ցանկանում են ունենալ դա իր պարզությամբ ու մաքրությամբ: Իրոք քչերն են, որ չեն տեսել դրա աստվածային զորության դրսևորումը: Նրանք ցանկանում են ոչ միայն այդ հավատից օգտվողները լինել, այլ ուզում են ունակ լինել ինքնուրույն գործադրելու այն:

Նրանք ցանկանում են հավատալ ավետարանի արարողություններին, ուզում են այնքան խորը հասկանալ դրանք, որքան կարող են:

Նրանք պատրաստ են հասկանալու ճշմարտությունը, որը նույնքան հին է, որքան ավետարանը, Պողոսի կողմից արտահայտված հետևյալ խոսքերով, որը (տրամաբանության և բնազանցության վարպետ էր, անհասանելի արդի քննադատների համար, որոնք դատապարտում են բոլոր կրոնները).

Որովհետև մարդկանցից ո՞վ գիտէ մարդի բաները եթե ոչ մարդի հոգին, որ նորանում է. այնպես էլ Աստուծոյ բաները ոչ ոք չգիտէ, եթե ոչ Աստուծոյ Հոգին:

Եվ մենք ոչ թե այս աշխարհքի հոգին առանք, այլ այն Հոգին՝ որ Աստվածանից է. որ ճանաչենք այն բաները որ Աստվածանից տրվեցավ մեզ (Ա Կորնթ. Բ.11–12):

Որովհետև մարմնավոր լինողները մարմնի բաներն են մտածում. իսկ հոգևոր լինողները՝ հոգու բաները (Հռովմ. Ը.5):

Բայց ասում եմ. Հոգով գնացեք. և մարմնի ցանկությունը չեք կատարիլ:

Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին մարմնին հակառակ. և սորանք իրար հակառակ են, որ մի գուցե այն որ դուք կամենում եք՝ այն անեք:

Բայց եթե Հոգուց եք առաջնորդվում, օրենքի տակ չեք (Գաղատաց. Ե.16–18):

Մեր երիտասարդությունը հասկանում է նաև ժամանակակից հայտնությամբ տրված սկզբունքը.

Ներկայումս, դուք ձեր բնական աչքերով չեք կարող տեսնել ձեր Աստծո ծրագիրը, այն բաների վերաբերյալ, որոնք ապագայում տեղի են ունենալու, և փառքը, որը պիտի գա շատ նեղությունից հետո (Վ և Ու 58.3):

Հոգու զորությամբ մեր աչքերը բացվեցին և մեր հասկացողությունը լուսավորվեց, այնպես որ մենք կարողացանք տեսնել ու հասկանալ Աստծո բաները...

Եվ մինչ մենք խորհրդածում էինք այդ ամենի շուրջ, Տերը դիպավ մեր հասկացողության աչքերին, և դրանք բացվեցին, և Տիրոջ փառքը ծագեց մեր շուրջը:

Եվ մենք տեսանք փառքը Որդու, Հոր աջ կողմում, և ստացանք նրա լիությունից.

Եվ տեսանք սուրբ հրեշտակներին, և նրանց, ովքեր սրբագործված են նրա գահի առաջ, որ երկրպագում էին Աստծուն, և Գառին, ովքեր երկրպագում են նրան հավիտյանս հավիտենից:

Եվ արդ, բազմաթիվ վկայություններից հետո, որ տրվել են նրա մասին, սա է վկայությունը, ամենավերջինը, որ մենք տալիս ենք նրա մասին. Որ, նա ապրո՛ւմ է:

Քանզի մենք տեսանք նրան, նույնիսկ Հոր աջ կողմում. և մենք լսեցինք ձայնը, որը վկայում էր, որ նա Հոր Միածինն է –

Որ նրանով, նրա միջոցով, և նրանից է, որ աշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո:

Եվ մինչդեռ մենք Հոգում էինք, Տերը պատվիրեց մեզ, որ մենք գրի առնենք տեսիլքը: (Վ և Ու 76.12, 76.19-24, 76.28):

Այս ուսանողները նաև պատրաստ են հասկանալու այն, ինչ Մովսեսը նկատի ուներ, ասելով.

Բայց այժմ իմ սեփական աչքերը տեսան Աստծուն. բայց ոչ իմ բնական, այլ իմ հոգևոր աչքերը, քանզի իմ բնական աչքերը չէին կարող տեսնել. քանզի ես կչորանայի և կմահանայի նրա ներկայության մեջ. բայց նրա փառքն ինձ վրա էր. և ես տեսա նրա երեսը, քանզի ես կերպարանափոխվեցի նրա առաջ (Մովսես 1.11):

Այս ուսանողները պատրաստ են հավատալու և հասկանալու, որ բոլոր այս բաները հավատի դրսևորումներ են, որոնք չպետք է բացատրվեն կամ հասկացվեն մարդկային տրամաբանությամբ, և ոչ էլ ֆիզիկայի հայտնի օրենքների փորձով:

Այս ուսանողները,կարճ ասած, պատրաստ են հասկանալու և հավատալու, որ կա բնական աշխարհ և կա հոգևոր աշխարհ, և որ բնական աշխարհի բաները չեն կարող բացատրել հոգևոր աշխարհի բաները, որ հոգևոր աշխարհի բաները չեն կարող հասկացվել կամ ընկալվել բնական աշխարհի բաներով, որ հնարավոր չէ գիտությամբ բացատրել Հոգու բաները, քանի որ նախ Հոգու բաները բավականաչափ հայտնի կամ հասկանալի չեն, և երկրորդ, մարդկային ուղեղն ու բանականությունը չի կարող ընկալել ու բացատրել անսահման իմաստությունն ու ծայրահեղ ճշմարտությունը:

Այս ուսանողներն արդեն գիտեն, որ պետք է լինեն «ազնիվ, արդար, ողջախոհ, գթասիրտ, արժանավոր և բոլոր մարդկանց բարիք պարգևող» և «եթե կան արժանավոր, գեղեցիկ, բարի համբավ ունեցող կամ գովասանքի արժանի բաներ, ապա մենք ձգտում ենք դրանց» (Հավատո Հանգանակ 1.13): Այս բաները նրանց ուսուցանվել են ծնված օրվանից: Ամեն հնարավոր ձևով նրանք պետք է քաջալերվեն անել այն բաները, որոնք իրենց իմանալով ճշմարիտ են, սակայն նրանք տարիներ տևող հրահանգման դասընթաց անցնելու կարիք չունեն, որպեսզի հավատան և իմանան այդ բաները:

Այս ուսանողները լիովին զգում են այն ուսմունքների անիմաստ լինելը, որոնք դարձնում են ավետարանի ծրագիրը հասարակ էթիկա ուսուցանող մի համակարգ: Նրանք գիտեն, որ եկեղեցու ուսմունքները առաքինության ամենաբարձր մակարդակի վրա են, նրանք նաև գիտեն, որ դրանք ավելին են: Նրանք կտեսնեն, որ այդ էթիկան հիմնականում վերաբերում է այս

կյանքի գործերին և ավետարանից էթիկայի մի համակարգ սարքելը՝ թերի հավատը խոստովանելն է, եթե ոչ անհավատությունը՝ հետագայում: Նրանք գիտեն, որ ավետարանի ուսմունքները վերաբերում են ոչ միայն այս կյանքին, այլ նաև գալիք կյանքին, որն իր մեջ կրում է փրկությունն ու համբարձումը՝ որպես վերջնական նպատակ:

Այս ուսանողներն իրենց նախնիների նման քաղցած ու ծարավ են Հոգու բաների և գալիք բաների վկայության համար, և իմանալով, որ հնարավոր չէ գիտական ճանապարհով բացատրել հավերժությունը, նրանք հավատ են փնտրում և գիտելիք, որը բխում է հավատից: Իրենց ունեցած Հոգով նրանք զգում են, որ իրենց փնտրած վկայությունը առաջանում և սնվում է ուրիշների վկայությամբ, և որ իրենց փնտրած վկայությունը, այսինքն՝առաքինի աստվածավախ մարդու կենդանի, վառվող, ազնիվ վկայությունն այն մասին, որ Հիսուսը Քրիստոսն է և Զոզեֆն Աստծո մարգարեն է, ավելի արժեքավոր է, քան հազարավոր գրքեր ու դասախոսություններ, որոնք նվազեցնում են ավետարանի արժեքը, դարձնելով այն էթիկայի մի համակարգ, կամ էլ փորձում են գիտականորեն բացատրել հավերժությունը:

Երկու հազար տարի առաջ Վարդապետն ասել է.

Կամ ո՞վ է ձեզանից այն մարդն, որ եթե նորանից իր որդին հաց ուզէ, մի՞թե քար կտայ նորան:
Եվ եթե ձուկ ուզէ, մի՞թե օձ կտայ նորան (Մատթէոս Է.9-10):

Ուխտի մեջ ծնված այս ուսանողները կարող են հասկանալ, որ տարիքը, հասունությունը և մտավոր ճկունությունը ինչ-որ ձևով կամ չափով անհրաժեշտ չեն Տիրոջ և Նրա Հոգու հետ հաղորդակցվելու համար: Նրանք գիտեն մանուկ Սամուելի պատմությունը տաճարում, տասներկուամյա Հիսուսի պատմությունը տաճարում, որտեղ նա զրուցում էր վարդապետների հետ և զարմացնում նրանց իր իմաստությամբ, տասնչորսամյա Զոզեֆի պատմությունը, որը տեսավ Հայր Աստծուն և Որդուն մարդու կողմից երբևէ տեսած ամենահրաշալի տեսիլքներից մեկում: Նրանք այնտեղ չեն, որտեղ կորնթացիներն էին, ում Պողոսն ասել էր.

Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թէ կերակուր. որովհետև տակավին չէիք կարող, այլ հիմա էլ դեռ չէք կարող (Ա Կորնթ. Գ.2):

Նրանք ավելի շուտ Պողոսի նման են, որն ասել է այդ նույն կորնթացիներին.

Երբ որ երեխա էի՝ երեխայի պես էի խոսում, երեխայի պես էի մտածում, երեխայի պես էի համարում. բայց երբ որ մարդ եղայ, այն երեխայության բաները խափանեցի (Ա Կորնթ. ԺԳ.11):

Այս ուսանողները, գալով ձեզ մոտ հոգևորն են գործադրում, քայլելով դեպի հասունություն, որին շատ շուտ կհասնեն, եթե ճիշտ սննդով ապահովեք նրանց: Նրանք գալիս են ձեզ մոտ, ունենալով հոգևոր գիտելիք և փորձ, որ աշխարհը չգիտի:

Այսքանը՝ ձեր ուսանողների մասին, թե ովքեր են նրանք, ինչ են ակնկալում և ինչի են ընդունակ: Ես ասում եմ ձեզ այն բաները, որ

ուսուցիչներից ոմանք են ինձ ասել, ինչպես նաև երիտասարդներից շատերը:

Ցույլ կտա՞ք այժմ մի քանի խոսք ասել ձեզ, ուսուցիչներ: Առաջինը, եկեղեցու կրոնական ուսուցանության և ուսումնական շենքերի ու հաստատությունների համար չկա այլ պատճառ կամ արդարացում, միայն այն է, որ երիտասարդությունը պետք է ուսուցանվի ու պատրաստվի ավետարանի սկզբունքներով, որը ներառում է երկու մեծ գործոններ, որ Հիսուսը Քրիստոսն է և Ջոզեֆը Աստծո մարգարեն էր: Էթիկայի համակարգն ուսանողներին ուսուցանելը բավարար հիմք չէ սեմինարիաներ և ինստիտուտներ աշխատացնելու համար: Հանրային դպրոցի համակարգը ուսուցանում է այդ էթիկան: Սեմինարիաների և ինստիտուտների ուսանողներն իհարկե պետք է ուսուցանվեն բարի ու առաքինի ապրելակերպի հասարակ կանոնները, քանի որ դա ավետարանի էական մասն է կազմում: Սակայն կան հավերժական կյանքի հետ կապված մեծ սկզբունքներ. քահանայությունը, հարությունը և նման շատ բաներ, որոնք շատ ավելին են, քան առաքինի ապրելակերպի հասարակ սկզբունքները: Այս հիմնական մեծ սկզբունքները նույնպես պետք է ուսուցանվեն երիտասարդներին, դրանք այն բաներն են, որ երիտասարդներն առաջին հերթին են ցանկանում իմանալ:

Առաջին անհրաժեշտ բանը, որ ուսուցիչը պետք է ունենա այս սկզբունքներն ուսուցանելու համար, դա այդ սկզբունքների ճշմարտության վերաբերյալ անձնական վկայությունն է: Ոչ ուսուցանման, ոչ ուսումնասիրման փորձը, ոչ էլ գիտական աստիճանների թիվը, չեն կարող զբաղեցնել այս վկայության տեղը, որը մեր եկեղեցու կրթական համակարգի ուսուցչի ամենաանհրաժեշտ հատկանիշն է: Ոչ մի ուսուցիչ, ով չունի ամուր վկայություն ավետարանի ճշմարտության մասին, որը բացահայտված է վերջին օրերի սրբերին և որին նրանք հավատում են, այսինքն՝ վկայություն, որ Հիսուսը Աստծո Որդին է և Մեսիան, Ջոզեֆ Սմիթի աստվածային միսիայի վկայությունը, ներառյալ առաջին տեսիլքի իրողությունը, չի պատկանում կամ տեղ չունի եկեղեցու կրթական համակարգում: Թեև ես հույս ունեմ, որ չկան այդպիսի ուսուցիչներ, և աղոթում եմ դրա համար, բայց եթե լինի այդպիսի որևէ մեկը, ապա նա անմիջապես պետք է հրաժարվի այդ գործից: Եթե վերստուգողը կամ կոորդինատորը գիտի այդպիսի մեկին, որը չի հրաժարվել իր գործից, ապա կոորդինատորը պետք է պահանջի նրա հրաժարականը: Առաջին Նախագահությունն ակնկալում է, որ այսպիսի մարդիկ հեռացվեն ուսուցանման համակարգից:

Սա չի նշանակում, որ մենք պետք է արտաքսենք եկեղեցուց այդպիսի ուսուցիչներին, ոչ մի դեպքում: Մենք պետք է սիրով աշխատանք տանենք նրանց հետ ողջ համբերությամբ ու երկայնամտությամբ, բերելով նրանց այն գիտելիքին, որի իրավունքը նրանք ունեն որպես աստվածավախ տղամարդիկ և կանայք: Սա նշանակում է, որ մեր

եկեղեցու դպրոցները չեն կարող ուսուցիչներ ունենալ, ովքեր դարձի չեն եկել (ավետարանին) և չունեն վկայություն (ավետարանի վերաբերյալ):

Սակայն ձեզ համար, ուսուցիչներ, միայն վկայություն ունենալը բավական չէ: Այս ամենից բացի, դուք պետք է ունենաք մարդկային բնավորության շատ հատկանիշներից ամենաբացառիկն ու ամենաթանկարժեքը՝ բարոյական քաջություն: Բարոյական քաջության բացակայության դեպքում ձեր հայտնած վկայությունը կհասնի ուսանողներին այնքան թույլ վիճակում, որ ուսանողների համար դժվար կամ նույնիսկ անհնարին կլինի ըմբռնել դա, և թույլ ու տատանվող վկայության հոգևոր և հոգեբանական ազդեցությունը կարող է իրականում վնասակար լինել օգտակար լինելու փոխարեն:

Սեմինարիայի կամ ինստիտուտի հաջողակ ուսուցիչը պետք է ունենա նաև բնավորության մեկ այլ բացառիկ ու թանկարժեք հատկանիշ, բարոյական քաջության «զույգ եղբորը», որը հաճախ շփոթում են նրա հետ: Ես նկատի ունեմ մտավոր քաջությունը, քաջություն՝ սկզբունքները, համոզմունքներն ու հավատը հաստատելու համար, որոնք միշտ չէ, որ ներդաշնակ են գիտական կամ այլ գիտելիքի հետ, որը ուսուցիչը կամ նրա կրթական կոլեգաները, կարծում են, թե ունեն:

Հայտնի են այնպիսի դեպքեր, երբ հավատ ունեցող ու պատասխանատու ծառայություններ կրող մարդիկ զգացել են, որ եթե իրենց ամբողջ հավատով վկայություն տան, ապա ծաղրի կենթարկվեն իրենց անհավատ կոլեգաների կողմից:Նրանք կամ պետք է փոփոխեին ու այլ ձևով ներկայացնեին իրենց հավատը, կամ թերի դարձնեին այն, կամ էլ ձևացնեին, թե այն այլևս գոյություն չունի: Այսպիսին են կեղծավորները իրենց կոլեգաների ու նույն կրոնին պատկանող անձանց հանդեպ:

Կարեկցանքի կարիք ունի (ոչ թե՝ ծաղրանքի, ինչպես շատերն են վարվում) ճշմարտությունն ունեցող և իմացող տղամարդը կամ կինը, որն անհրաժեշտ է գտնում ժխտել ճշմարտությունը կամ համաձայնվել սխալի հետ, որպեսզի կարողանա ապրել անհավատների մեջ կամ նրանց հետ առանց ծաղրի ենթարկվելու կամ անհավանության արժանանալու: Ողբերգական է իրոք նրա տեղը, քանի որ փաստացի բոլոր այդ հրաժարումներն ու ձևափոխումներն ի վերջո կհանգեցնեն պատիժների, որոնցից թույլ կամք ունեցողը կձգտեր խուսափել: Չկա ոչ մի բան, որ աշխարհն այդքան արժեքավորում ու մեծարում է, քան երբ առաքինի համոզմունքներ ունեցող տղամարդը պաշտպանում է դրանք ցանկացած և բոլոր հանգամանքներում: Չկա ոչ մի բան, ինչին աշխարհն ավելի մեծ արհամարանքով է վերաբերվում, քան առաքինի համոզմունքներ ունեցող տղամարդը, երբ խույս է տալիս դրանցից, հրաժարվում կամ ուրանում դրանք: Ցանկացած վերջին օրերի սուրբ հոգեբան, քիմիկոս, ֆիզիկոս, երկրաբան, հնագետ կամ մեկ այլ գիտնական իր իմացածը և հավատացածը սխալ բացատրելու կամ սխալ մեկնաբանելու, շրջանցելու կամ խուսափելու, և ավելին՝ եկեղեցու հիմունքային վարդապետությունները ժխտելու կամ դրանք ուրանալու

դեպքում, իր խելքը ստին է տալիս, կորցնում է ինքնահարգանքը, վիշտ է բերում իր ընկերներին, կոտրում է իր ծնողների սիրտը և ամոթ է բերում նրանց, պղծում է եկեղեցին ու նրա անդամներին, կորցնում է այն մարդկանց հարգանքն ու պատիվը, ում փնտրել է իր կյանքի ընթացքում և նվաճել է որպես ընկերներ ու օգնողներ:

Ես աղոթում եմ և հույս ունեմ, որ եկեղեցու դպրոցական համակարգի ուսուցիչների մեջ չկան այդպիսիները, սակայն եթե լինեն էլ, բարձր կամ ցածր, նրանք պետք է անցնեն նույն ճանապարհով, ինչ վկայություն չունեցող ուսուցիչը: Կեղծիքը, կեղծ պատրվակը, խուսափումն ու երկերեսանիությունը տեղ չունեն եկեղեցու դպրոցական համակարգում կամ երիտասարդության բնավորության զարգացման և հոգևոր աճի գործընթացում:

Հաջորդ բանը, որին պետք է ուշադրություն դարձվի եկեղեցու կրթական հաստատություններում հետևյալն է. այն տղամարդիկ, ովքեր իրենք դեռ դարձի չեն եկել, անհավատ են, փորձում են շեղել համոզմունքները, կրթությունը, մեր երիտասարդների, ինչպես նաև մեծահասակների միջոցառումները իրենց հունով ընթացող ճիշտ ճանապարհից դեպի այլ ճանապարհ, որը (տանում է այնտեղ, ուր անհավատը կգնար) չի բերում մեզ այն տեղը, ուր ավետարանն է տանում, այդպիսի տղամարդիկ չպետք է ծառայեն հոգևոր վստահելի աստիճաններում: Սա խղճի բալասան է անհավատի համար, ով բոլորովին կարևորություն չի տալիս դրան: Սա ճշմարտության հանդեպ ամենամեծ դավաճանությունն է և պատճառները շատ են մտածելու համար, որ դա տեղի է ունեցել:

Որպես զգուշացում եկեղեցու կրթական համակարգում տեղի ունեցող նույն բանի վերաբերյալ ես կուզենայի նշել մեկ այլ փաստարկ: Եղել են դեպքեր, երբ մեր եկեղեցու անդամները գնացել են այլ տեղեր որոշ հարցերում հատուկ վերապատրաստում ստանալու համար: Նրանք անցել են դասընթաց, որը ենթադրաբար վերջին խոսքն է, ամենաժամանակակից հայացքը, ներկայիս նորագույն մոտեցումը, ապա նրանք վերադարձել են և մեզ վրա կիրառել դա առանց մտածելու, թե արդյո՞ք մենք դրա կարիքն ունենք, թե՝ ոչ: Ես չեմ ցանկանում նշել քաջ հայտնի և հավատացած եմ, որ լավ ճանաչված, այդ կարգի դեպքերը: Ես չեմ ցանկանում վիրավորել որևէ մեկի զգացումները:

Մտքի, կրթության, միջոցառման հետ կապված այդ նոր ժանիքավոր գաղափարները փորձելուց առաջ փորձագետները պետք է կանգ առնեն և մտածեն, թե իրենց կարծիքով, որքան ենք մենք հետ մնացել: Եվ որքան էլ որ մենք հետ մնացած լինենք որոշ հարցերում, շատ հարցերում մենք բավականին առաջ ենք մյուսներից, այնպես որ այս նոր մեթոդները մեզ համար կարող են հին լինել, եթե ոչ մաշված:

Ինչ վերաբերում է հասարակական կյանքին և գործունեությանն ընդհանրապես, սոցիալական խմբակային մաքուր զվարճանքին ու հանգստին, շատ մոտ հյուսված ու հոգատարությամբ ղեկավարվող կրոնական երկրպագությանն ու գործունեությանը, դրական, հստակ,

հավատ առաջացնող հոգևորությանը, իրական, ամենօրյա պրակտիկ կրոնին, այն կայուն ցանկությանը և Աստծո հանդեպ խորը հավատ զգալու կարիքին, ապա մենք շատ առաջ ենք առաջ քայլող հասարակության ավանգարդում: Մինչ ջանք կկատարվի մեզ պատվաստել այս նոր գաղափարները, փորձագետները պետք է բարի լինեն մտածել, թե արդյո՞ք կիրառելի են մեզ համար այն մեթոդները, որ օգտագործվում են հասարակության հոգին խթանելու կամ կրոնական միջոցառումներ կազմակերպելու համար այն խմբերի մեջ, որոնք անկումային վիճակում են կամ անտարբեր են այդպիսի բաների նկատմամբ, և թե արդյոք դա մեր վզին փաթաթելու նրանց ջանքը կոպիտ չէ, կամ շատ արհեստական:

Օրինակ, հոգևոր առումով զարգացած և կրոնի առումով աչալուրջ մեր երիտասարդությանը փորձել ուսուցանել մի ծրագիր, որը միտված է երիտասարդությանը կրոն ուսուցանել առանց Հոգու հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, ոչ միայն թույլ չի տա բավարարել մեր կրոնական կարիքները, այլ նաև հակված կլինի ոչնչացնել մեր երիտասարդությանը բնորոշ լավագույն հատկանիշները:

Ես արդեն նշել եմ, որ մեր երիտասարդությունը հոգևոր առումով մանուկ չէ, նրանք քաջատեղյակ են աշխարհի նորմալ հոգևոր հասունությանը: Հոգևոր առումով նրանց որպես երեխաների վերաբերվելը, ինչպես աշխարհը կարող է վերաբերվել նույն տարիքային խմբին, նույնպես անախրոնիզմ է: Մեկ անգամ ևս ասում եմ, հնարավոր չէ մեր սեմինարիայի և ինստիտուտի դռներով անցնող երիտասարդությունը չգիտակցի հոգևոր օրհնություններից եկող օգուտը, չտեսնի աղոթքի զորությունը, ականատես չլինի հավատի ուժով հիվանդին առողջացնելուն, չտեսնի հոգևոր դրսևորումները, որոնք աշխարհն այսօր այդպես արհամարում է: Կարիք չկա գաղտնի մոտենալ հոգևոր փորձ ունեցող այս երիտասարդությանը ու ականջներին շշնջալ կրոնը, կարող եք մոտենալ առջևից՝ երես առ երես խոսել նրանց հետ: Կարիք չկա քողարկել կրոնական ճշմարտությունները աշխարհիկ բաների ծածկույթով, կարող եք բացեիբաց ներկայացնել նրանց այս ճշմարտությունները իրենց բնական հանդերձանքով: Դուք կտեսնեք, որ շատ վախենալու կարիք չկա: Կարիք չկա քայլ առ քայլ մոտենալ, «քնելու հեքիաթներ պատմել», քնքշությամբ գուրգուրել, հովանավորել կամ մանկական հնարքներ օգտագործել, որպեսզի հասնեք հոգևոր առումով անփորձ մարդկանց, եթե նրանք այդ առումով ընդհանրապես մեռած չեն:

Դուք, ուսուցիչներդ, մեծ առաքելություն ունեք: Որպես ուսուցիչներ, դուք կանգնած եք կրթության ամենաբարձր գագաթին, քանի որ ուսուցանումն իր անգին արժեքով ու հեռու հասնող ազդեցությամբ կարող է համեմատվել այն բանի հետ, որի հետ շփվելիս մարդը զգում է երեկվա հավերժությունը, այսօրվա մահկանացիությունը և վաղվա անվերջությունը: Ձեր թեման ոչ միայն ժամանակն է, այլ հավերժությունը: Ոչ միայն ձեր սեփական փրկությունը, այլ նրանց՝ ովքեր անցնում են ձեր տաճարի սահմաններով, պետք է լինի ձեր որոնած օրհնությունը, և որը

դուք ձեռք կբերեք կատարելով ձեր պարտականությունը: Որքան փայլուն կլինի ձեր փառքի պսակը, երբ ամեն մի փրկված հոգի զարդարի այն որպես գոհար:

Բայց այս օրհնությունն ունենալու և այդպես պսակով զարդարված լինելու համար դուք պետք է, ես նորից եմ կրկնում, դուք պետք է ուսուցանեք ավետարանը: Դուք չունեք այլ դեր և այլ պատճառ եկեղեցու դպրոցական համակարգում ներկա լինելու համար:

Դուք ունեք զուտ մշակութային հետաքրքրություն կամ զուտ աշխարհիկ գիտելիքի հետաքրքրություն, սակայն ես նորից եմ կրկնում շեշտելու համար, ձեր գլխավոր հետաքրքրությունը, ձեր հիմնական ու միակ պարտականությունը Տեր Հիսուս Քրիստոսի ավետարանն ուսուցանելն է, ինչպես այն բացահայտվել է այս վերջին օրերին: Դուք պետք է ուսուցանեք այս ավետարանը, օգտագործելով ձեր աղբյուրներն ու հեղինակությունները, եկեղեցու օրինակելի աշխատությունները և այն մարդկանց խոսքերը, ում Աստված կանչել է առաջնորդելու Իր ժողովրդին այս վերջին օրերին: Դուք չպետք է, անկախ ամեն ինչից, ձեր գործի մեջ մտցնեք ձեր սեփական աշխարհիկ փիլիսոփայությունը, տարբերություն չկա, թե որն է դրա աղբյուրը, կամ թե որքան հաճելի ու տրամաբանական դա ձեզ թվա: Այդպես վարվելը նույնն է, ինչ ունենալ այնքան տարբեր եկեղեցիներ, որքան սեմինարիաներ ունենք, իսկ դա քաոս է:

Դուք չպետք է, անկախ ամեն ինչից, փոխեք եկեղեցու վարդապետությունները կամ ձևափոխեք դրանք այն տեսքից, ինչպես ներկայացված են եկեղեցու օրինակելի աշխատություններում, նրանց կողմից, ում հեղինակությունն է հասցնել Տիրոջ միտքն ու կամքը եկեղեցուն: Տերն ասել է, որ Նա «նույնն է՝ երեկ, այսօր և հավիտյանս» (2 Նեփի 27.23):

Ես կոչ եմ անում ձեզ չանել այսօր այդքան տարածված մանկական սխալներ, մտածելով, որ քանի որ մարդն այդքան հեռու է գնացել բնության ուժերն աշխատեցնելու ու դրանք իր օգտագործման համար հարմարեցնելու գործում, Հոգու ճշմարտությունները փոխվել կամ ձևափոխվել են: Դա էական և նշանակալից փաստ է, որ մարդու հոգևոր բաների նվաճումները չեն քայլում կողք կողքի նյութական բաների նվաճումների հետ: Երբեմն թվում է, թե հակառակն է ճշմարիտ: Մարդկային դատողության զորությունը չի համընկնում նրա հասկանալու զորության հետ: Միշտ հիշեք և փայփայեք Միջնորդական աղոթքի մեծ ճշմարտությունը.

Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված. և նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին (Հովհաննես ԺԷ.3):

Սա բացարձակ ճշմարտություն է և այդպիսին են բոլոր հոգևոր ճշմարտությունները: Նրանք չեն փոխվում մի նոր էլեմենտի, եթերային ալիքի հայտնագործությամբ կամ էլ՝ արագության ռեկորդից մի քանի վայրկյան, ռոպե կամ ժամ կրճատելուց:

Դուք չպետք է ուսուցանեք աշխարհի փիլիսոփայությունները, հին կամ նոր, հեթանոսական կամ քրիստոնեական, քանի որ դա հասարակական

դպրոցների թեման է: Ձեր միակ թեման ավետարանն է, և այն անսահման է իր սեփական ասպարեզում:

Մենք հարկեր ենք վճարում սատարելու համար այն պետական հաստատություններին, ում ֆունկցիան և աշխատանքն է ամբողջ դպրոցական ծրագրի շրջանակներում ուսուցանել արվեստ, գիտություն, գրականություն, պատմություն, լեզուներ և այլն: Այս հաստատությունները պետք է կատարեն այդ աշխատանքը: Սակայն մենք օգտագործում ենք եկեղեցու տասանորդը եկեղեցու դպրոցական համակարգի մասին հոգ տանելու համար, և այն դրոշմված է սուրբ հավատով: Եկեղեցու սեմինարիաներն ու ինստիտուտները պետք է ուսուցանեն ավետարանը:

Այսպիսով նորից խոսելով աշխատանքային ժամանակի և ընդհանրապես ժամանակի մասին այն շարունակական համառությամբ, որ ես ցուցաբերում եմ, շատ գնահատելի է, որ սեմինարիաներում և ինստիտուտներում աշխատանքը կազմակերպելիս ընդգրկվի նաև «ազատ ժամանակ» հասկացողությունը: Մեր գործելակերպը պարզ է: Եթե չենք կարող ուսուցանել ավետարանը, եկեղեցու վարդապետությունները, եկեղեցու օրինակելի աշխատությունները՝ դրանք բոլորը սեմինարիաների և ինստիտուտների «ազատ ժամանակ», ուրեմն պետք է հրաժարվենք «ազատ ժամանակից» և փորձենք մշակել մեկ այլ ծրագիր այդ հաստատություններում ավետարանի աշխատանքը կատարելու համար: Եթե այլ ծրագիր մշակելն անհնարին է, ապա պիտի հրաժարվենք սեմինարիաներից և ինստիտուտներից և վերադառնանք եկեղեցու քոլեջներին ու ակադեմիաներին: Զարգացումների լույսը տեսնելով մենք վստահ չենք, որ այս բաները երբևէ կդադարեն գործել:

Մենք կոնկրետ ենք այս հարցին վերաբերվում, այսինքն, մենք մեզ արդար կզգանք միայն այն դեպքում, երբ կրոնի մեր սեմինարիաներն և ինստիտուտները պահելու նպատակով տասանորդի օգտագործված մեկ դոլարը ծառայի վերը նշված եղանակով ավետարանն ուսուցանելուն: Տասանորդը ներկայացնում է այնքան շատ ծանր աշխատանք, այնքան անձնուրացություն, այնքան զոհաբերություն, այնքան հավատ, որ չի կարող օգտագործվել եկեղեցու երիտասարդությանը մի անգույն ծրագրով տարրական էթիկա ուսուցանելու համար: Այս որոշումը և իրավիճակը պետք է պահպանել հաջորդ բյուջեի հատկացման ժամանակ: Ասելով սա, ես խոսում եմ Առաջին Նախագահության անունից:

Կրոնական ուսուցանման եղանակի վերաբերյալ ասված ամեն ինչը, ինչպես նաև ավետարանը պատշաճ չուսուցանելու դեպքում, այդտեղից ինքնաբերաբար բխող արդյունքները վերաբերվում են ամբողջությամբ և հավասարապես ինչպես սեմինարիաներին, այնպես էլ՝ ինստիտուտներին, և եկեղեցու կրթական համակարգին պատկանող ցանկացած ու յուրաքանչյուր այլ կրթական հաստատությանը:

Առաջին Նախագահությունն անկեղծորեն խնդրում է ձեր բոլորից՝ տղամարդկանց և կանանց սրտից բխած օգնությունն ու

համագործակցությունը: Ծանր իրավիճակներում աշխատելով դուք գիտեք այն խնդրի մասին, որը սպառնում է մեզ և որը մեծ և խոր ազդեցություն է թողնում մեր երիտասարդության հոգևոր առողջության ու փրկության վրա, ինչպես նաև ամբողջ եկեղեցու ապագա բարեկեցության վրա: Մենք ձեր կարիքն ունենք, եկեղեցին ունի ձեր կարիքը, Տերն ունի ձեր կարիքը: Հետ մի պահեք ձեզ, ոչ էլ հետ քաշեք ձեր օգնող ձեռքը:

Ավարտելով, ցանկանում եմ իմ խոնարհ ու անկեղծ հարգանքիս տուրքը մատուցել ուսուցիչներին: Ինքս իմ սեփական ճանապարհն անցնելով դպրոցի միջով՝ բարձրագույն դպրոց, քոլեջ և պրոֆեսիոնալ դպրոց, ես որոշ բաներ գիտեմ դժվարությունների ու պահանջվող զոհաբերության մասին, սակայն գիտեմ նաև, թե ինչ զարգացում ու բավարարվածություն է սպասում, երբ հասնում ենք վերջին: Ես կանգնած եմ այստեղ իմանալով, որ ձեր մեծամասնությունը մեծ աշխատանք է կատարել հասնելու համար այն տեղը, ուր ներկայումս գտնվում է: Դեռ ավելին, ժամանակ կար, երբ ես առանց հաջողության հասնելու ուսուցանում էի դպրոցում, և ես գիտեմ նույնպես այն ուսուցիչների զգացմունքները, որոնք առանց շարժվելու մեկ աստիճան առաջ մնում են ցածր աստիճանների վրա:

Ես գիտեմ ձեր ստացած փաստացի փոխհատուցման ներկայիս գումարը և թե որքան աղքատիկ է այն՝ շատ աղքատիկ: Սրտիս խորքից ես ցանկանում եմ, որ կարողանանք բարձրացնել այն, սակայն եկեղեցու եկամտից կրթության համար արվող ծախսն արդեն այնքան մեծ է, որ պետք է անկեղծորեն ասեմ, որ անհապաղ լավացման կանխասպասում չկա: Այս դպրոցական տարվա մեր բյուջեն կազմում է $860,000 կամ ամբողջ եկեղեցու համար նախատեսված ընդհանուր գումարի 17 տոկոսը, ներառյալ ընդհանուր վարչական, ցցերի, ծխերի, ճյուղերի և միսիաների ծախսերը, բոլոր նպատակների համար, այդ թվում՝ բարեկեցության ծրագրի և բարեգործությունների: Իսկապես, ես ցանկանում եմ, որ մարդկանց բարգավաճումն այնքան մեծ լինի, որ նրանք կարողանան ու իսկապես այնքան տասանորդ վճարեն, որպեսզի գործենք այնպես, ինչպես գործում ենք:

Ես իմ հարգանքի տուրքն եմ մատուցում ձեր ջանասիրությանը, ձեր նվիրվածությանը, ձեր զոհաբերությանը, ճշմարտության գործին ծառայելու ձեր ձգտմանը, ձեր հավատին Աստծո և Նրա աշխատանքի հանդեպ, և ձեր անկեղծ ցանկությանը անելու այն, ինչ մեր կարգված առաջնորդը և մարգարեն կցանկանա, որ անեք: Ես աղաչում եմ ձեզ չկատարել ձեր առաջնորդի խորհուրդը չընդունելու սխալը, կամ թերանալ նրա կամքը կատարելու մեջ, կամ էլ՝ հրաժարվել հետևելու նրա ցույց տված ուղղությանը: Հին օրերի Դավիթը երբ Սավուղի վերարկուի ծայրը ծածուկ կտրեց, խոցված սրտով աղաղակեց.

Աստված չանէ որ Տիրոջ օծեալին իմ տիրոջը այս բանը անեմ, որ իմ ձեռքը նրա վրա մեկնեմ. որովհետև նա Տիրոջ օծեալն է (Ա Թագավորաց ԻԴ.6):

Թող Աստված միշտ օրհնի ձեզ ձեր առաքինի բոլոր ջանքերում: Թող Նա սրընթաց դարձնի ձեր հասկացողությունը, ավելացնի ձեր իմաստությունը, փորձով հարստացնի ձեզ, համբերություն, գթասրտություն պարգևի ձեզ և որպես ամենաթանկ պարգևներից մեկը՝ օժտի ձեզ հոգիները տարբերելու ունակությամբ, որպեսզի դուք որոշակիորեն ճանաչեք առաքինության հոգին և դրա հակառակը, երբ այդ հոգիներն այցելեն ձեզ: Թող Նա ձեր առաջ բացի այն մարդկանց սրտերը, ում ուսուցանում եք և ապա դուք իմանաք, որ մտնելով այնտեղ սուրբ տեղ եք զբաղեցրել, որը չպետք է ոչ կեղտոտվի, ոչ էլ պղծվի սխալ ու քայքայիչ վարդապետությամբ, կամ էլ մեղսագործ արարքով: Թող Նա հարստացնի ձեր գիտելիքը առաքինություն ուսուցանելու հմտությամբ և զորությամբ: Թող աճեն ձեր հավատն ու վկայությունները և ձեր ունակությունը՝ քաջալերել և խրախուսել դրանք մյուսների մեջ, որպեսզի օրեցօր աճեն: Այս բոլոր օրհնությունները թող ձերը լինեն, որպեսզի Սիոնի երիտասարդները ուսուցանվեն, զարգանան, քաջալերվեն, ոգևորվեն, որպեսզի նրանք ճանապարհի մոտ չընկնեն, այլ առաջ գնան դեպի հավերժական կյանքը, և երբ նրանք այս օրհնությունները ստանան, դուք նույնպես օրհնվեք նրանց շնորհիվ: Եվ ես աղոթում եմ այս ամենի համար Նրա անունով, ով մեռավ, որ մենք ապրենք, Աստծո Որդու, աշխարհի Քավիչի՝ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02327 09201 8
32709 201